

«Հաստատում են»
Շիրակի Մ. Նալբանդյանի անվան
պետական համալսարանի հիմնադրամի
ռեկտորի ժ/Է Ս. Աերոջյան
«02» և Ապրիլի 2022 թ.



ԿԱՐԾԻՔ
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Լիլիթ Գուրգենի Մելիքյանի՝ Օտար լեզվի ուսումնառության սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրները թեմայով ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Լիլիթ Գուրգենի Մելիքյանի՝ Օտար լեզվի ուսումնառության սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրները թեմայով ատենախոսական աշխատանքը քննարկվել է Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնում, և կարծիքը հաստատվել է 2022 թ.-ի օգոստոսի 31-ին կայացած նիստում (արձանագրություն թիվ 1): Ներկա էին՝ հոգ. գիտ. դոկտոր, պրոֆ. Վ. Կարապետյանը, հոգ. գիտ. թեկնածու, դոցենտ Կ. Սահակյանը, հոգ. գիտ. թեկնածու, դոցենտ Ա. Թադևոսյանը, հոգեբանության ամբիոնի դասախոս Ա. Հակոբյանը:

Օտար լեզվի ուսումնառության խնդիրն այսօր լայնորեն արձարժվող թեմա է, որի բազմաշերտ քննությունը սույն ատենախոսության հենքն է: Լեզվի մետաճանաչողական կողմն ուսումնասիրված է, իսկ անհա սոցիալ-հոգեբանական կողմի շեշտադրմամբ ուսումնառության գործընթացը դեռևս լուրջ հետազոտության կարիք ունի: Ատենախոսը նշում է, որ օտար լեզվի արդյունավետ յուրացման համար ուսումնասիրողը պետք է դուրս գա ճանաչողական տեսության նեղ շրջանակներից և առավել ուշադրություն դարձնի անձի հոգեբանական հիմնախնդիրներին: Աշխատանքի մեջ ատենախոսն իրավացիորեն կառուցում է օտար լեզվի սոցիալ-կրթական մոդելը, յուրովի ներկայացնում է օտար լեզվի ուսումնառության ընթացքում առաջ եկած սոցիալ-հոգեբանական պահանջները, մշակում է օտար լեզվի ուսումնառության ինքնատիպ մեթոդաբանություն:

Աշխատանքի ներածության մեջ հիմնավորվում է հետազոտության ադիականությունը, որոշված է հետազոտության նպատակը, վարքածը, օբյեկտը, առարկան, առաջադրված են հետազոտության խնդիրները, որոնք բխում են հետազոտության նպատակից, ձևավորված են պաշտպանության ներկայացվող դրույթները: Ներկայացված են նաև հետազոտության տեսական և մեթոդաբանական

հիմքերը, հետազոտության մեթոդները, փուլերը, ընտրանքը, աշխատանքի գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, փորձաքննությունը, կառուցվածքը և ծավալը:

Հետազոտության գիտական ապարատի բաղադրատարրերը փոխհամաձայնեցված, փոխապայմանավորված և փոխկապված են:

Առաջին «Օտար լեզվի ուսումնառության հոգեբանական հիմնախնդիրը» գլխում, հեղինակը ներկայացնում է հոգեբանական գրականության մեջ օտար լեզվի ուսումնասիրության գիտատեսական հիմքերը, հիմնախնդրի առանցքային տեսությունները: Բավականին մանրամասն ուսումնասիրված և վերլուծված են խոսքամշակման, բառամթերքի պահեստավորման ու պահպանման, լեզվի յուրացման սոցիալ-հոգեբանական կողմի առանձնահատկությունների, ներքին խոսքի կարևորագույն դերի հետ կապված հարցերը: Ատենախոսության մեջ տեղ է հատկացված Լ.Վիգոտսկու, Ա.Ա.Լեոնտևի, Սոկոլովի, Կրաշենի աշխատություններին, որպես հիմնարար հետազոտության դասական օրինակներ: Հետազոտողը իրավացիորեն անդրադառնում է նաև Չոմսկու և Միլլերի հոգելեզվաբանական մոդելներին՝ ներկայացնելով լեզվի ուսումնառության զուտ լեզվաբանական ասպեկտները: Աշխատանքում առկա է բավականին հարուստ գրականություն, ներկայացվող հիմնախնդրին ոչ ստանդարտ, ինքնատիպ լուծումներ, ծավալուն հետազոտություն, զրազետ մտաեցում առաջադրված խնդիրներին: Միանգամից պարզ է դառնում ատենախոսի դասավանդման փորձառության ու հարուստ պրակտիկայի առկայության փաստը, քանի որ թեզում հանգամանալից ներկայացված են օտար լեզվի դասավանդման յուրօրինակ մոդելները: Մշակութային տիպերի բաղդատման ու մշակութային առանձնահատկությունների վերաբերյալ ուսումնասիրությունները առավել արժևորում են սույն աշխատանքը: Կրթության ոլորտում այս աշխատանքը կարող է նորարարական ու տարբերվող լինել և լեզվակրթական հարցերի դիտարկման այլ տեսանկյուններ առաջարկել:

Երկրորդ «Օտար լեզվի ուսումնառության ժամանակակից փորձարարական մեթոդները» գլխում, ներկայացված են արդի փորձարարական մեթոդները՝ իրենց առավելություններով ու թերություններով: Հանգամանալից վերլուծություն են ստանում Շլեգելի ու Հումբոլդտի պլատոնական տեսությունները, համընդհանուր քերականական մոդելին, գիտակցական կամ անգիտակցական ուսուցման գործընթացին առնչվող տեսությունները: Հատկանշական է, որ ատենախոսը, հիմք ընդունելով Վիգոտսկու և Լեոնտևի տեսությունները, առաջարկում է ներքին խոսքի մասին իր տեսակետը, որը արդիական հայեցակարգ է:

Չրրորդ «Օտար լեզվի ուսումնառության հոգեբանական հիմնախնդրի փորձարարական հետազոտությունները» գլխում, իրականացվել են նպատակամետ

հետազոտություններ՝ հիմնվելով տեսական մասում ուսումնասիրված օտար լեզվի ուսուցման մեթոդների վերլուծությունների վրա: Ինքնատիպ ներկայացված են այսօր առավել տարածված դասավանդման ոճերը՝ համակցված որոշակի հոգեբանական փոփոխականների դուրսբերման փորձի հետ: Համոզիչ է այն պնդումը, որ այդ ոճերից յուրաքանչյուրի ընտրությունը մեծապես կախված է լսարանի ընդհանուր պահանջներից, ուսանողների անհատական-հոգեբանական առանձնահատկություններից, հետապնդող նպատակներից: Տարբեր մեթոդներով՝ այդ թվում Գարդների հարցաթերթով ու ատենախոսի առաջարկված մեթոդաբանությամբ չափվում են օտար լեզվում դրդապատճառի, դիրքորոշման ու լեզվական տազևապի բաղադրիչները: Այս հարցաթերթերի կիրառման հետ մեկտեղ՝ ներկայացվում է ուսումնական առաջադրանքների շարք՝ լեզվական տազևապի, դիրքորոշման, ներքին կամ արտաքին դրդապատճառների համապատասխանաբար նվազեցման կամ բարձրացման նպատակով: Տարբերվող է մշակույթների բաղադրամասի մեթոդը օտար լեզվի ուսուցման համատեքստում, ինչպես նաև հետաքրքիր մեկնաբանություն են ստացել ուսումնական ինքնուրույնության, ուսանող-ծնող, ուսանող-ուսանող, ուսանող-դասախոս հարաբերություններով պայմանավորված ուսումնառության գործընթացին առնչվող հարցերը, որոշակի հոգեբանական մեխանիզմների ներմուծումն օտար լեզվի ուսումնառության գործընթացում:

Ատենախոսական աշխատանքում եզրակացությունները բխում են ներածության մեջ առաջադրված նպատակից ու խնդիրներից, իսկ հիմնական դրույթները բավարար կերպով արտացոլված են թվով 10 գիտական հոդվածներում: Մեղմագիրն արտացոլում է ներկայացվող պահանջներն ու ընդգրկում է աշխատանքի հիմնական դրույթները: Թեզում դիտարկված հարցերն ու եզրակացությունները կնպատեն ուսումնական գործընթացների առավել արդյունավետ կազմակերպմանը:

Վերոնշյալի հետ մեկտեղ պետք է արձանագրել, որ աշխատանքում առկա են որոշակի նկատառումներ և դիտողություններ, որոնք հանգում են հետևյալին.

1. Մետաձանաչողական և սոցալ-հոգեբանական դրույթների համակցված շեշտադրումը լեզվի ուսումնառության արդյունավետ մոդելների համալրումում առավել շահեկան կլիներ:
2. Ատենախոսության մեջ ցանկալի էր անձնային հատկանիշների, անհատական հոգեբանական և գեներային ցուցիչների վերաբերյալ նյութերի վերլուծությունը՝ արդյունավետ ուսումնառության գործընթացում:
3. Աշխատանքում առկա են վրիպակներ, հավելվածում առակա չեն հարցազրույցի մեթոդի կառուցվածքը, հարցերի թեմատիկ հերթականությունը:

